Ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր*		
N	**Փաստաթղթի անվանումը**	**Նշումներ**
1.	Հաշվի բացման դիմում-պայմանագիր	
2.	ՀՀ կամ ԼՂՀ պետական ռեգիստրի վկայական	
3.	Կանոնադրություն	
4.	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն), եթե վերջինս ներառված չէ ՀՀ կամ ԼՂՀ պետական ռեգիստրի վկայականում:	
5.	Բաժնետերերի/մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ ռեեստրից՝ քաղվածքի կամ տեղեկանքի տեսքով, եթե բացակայում է կանոնադրությունում:	
6.	Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի (գործադիր մարմինը ընկերություն լինելու դեպքում՝ տվյալ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի, ինչպես նաև հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց (լիազորված անձինք, հաշվի կարգադրիչներ և այլն) անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր	
7.	Գործադիր մարմնի ղեկավարի և հաշվի այլ կարգադրիչների պաշտոնների նշանակման հրամանները կամ որոշումները, եթե վերջինս բացակայում է պետ. ռեգիստրի վկայականի ներդիրով կամ կանոնադրությունով:	
8.	Ընկերության կանոնադրական կապիտալում 10% և ավելի բաժնեմաս (բաժետոմս) ունեցող՝ ա. ֆիզիկական անձ մասնակիցների/բաժնետերերի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, բ. Իրավաբանական անձ մասնակիցների/բաժնետերերի դեպքում՝ պետ. ռեգիստրի վկայականի, կանոնադրության և ՀՎՀՀ-ի պատճենները, ինչպես նաև մասնակիցների/բաժնետերերի վերաբերյալ ռեեստրից ցուցակ/տեղեկանք, եթե բացակայում է կանոնադրությունում:	
9.	Հաշվի կարգադրիչների ստորագրության և հաճախորդի կնիքի դրոշմի նմուշների՝ նոտարական վավերացմամբ կամ բանկի կողմից հաստատված քարտ: ԼՂՀ-ում գրանցված հաճախորդների դեպքում նմուշի քարտը ենթակա է հաստատման պետական հարկային մարմնի կողմից:	
10.	ԱՄՆ հարկատուների վերաբերյալ W-9 տեղեկանքի ձև կամ ԱՄՆ ոչ հարկատուների իրավաբանական անձանց վերաբերյալ W-8BENE տեղեկանքի ձև***	
11.	Բանկի հայեցողությամբ՝ այլ փաստաթղթեր:	

Անհատ ձեռներեց հաճախորդների հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր*

N	Փաստաթղթի անվանումը	Նշումներ
1.	Հաշվի բացման դիմում-պայմանագիր	
2.	Անձը հաստատող փաստաթուղթ	
3.	Հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք	
4.	Պետական ռեգիստրի վկայական(բացակայության դեպքում՝քաղվածք գրանցամատյանից, տրված պետ. ռեգիստրի կողմից)	
5.	ՀՎՀՀ (հարկ վճարողի հաշվառման համար), եթե բացակայում է պետական ռեգիստր վկայականում	
6.	Հաշվի կարգադրիչների ստորագրության և հաճախորդի կնիքի դրոշմի նմուշների՝ նոտարական վավերացմամբ կամ բանկի կողմից հաստատված քարտ: ԼՂՀ-ում գրանցված հաճախորդների դեպքում նմուշի քարտը ենթակա է հաստատման պետական հարկային մարմնի կողմից:	
7.	ԱՄՆ հարկատուների վերաբերյալ W-9 տեղեկանքի ձև կամ ԱՄՆ ոչ հարկատուների իրավաբանական անձանց վերաբերյալ W-8BEN տեղեկանքի ձև***	
8.	Բանկի հայեցողությամբ՝ այլ փաստաթղթեր:	

* Հաճախորդի կողմից ներկայացվում միայն այն փաստաթղեթերի բնօրինակները, որոնք բացակայում են Բանկում: Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերը պատճենահանվում են Բանկի աշխատակցի կողմից և ստորագրությամբ հաստավում Բանկի աշխատակցի և Հաճախորդի կողմից:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր**

N	Փաստաթղթի անվանումը	Նշումներ
1.	Հաշվի բացման դիմում-պայմանագիր	
2.	Իրավաբանական անձի գրանցման երկրի օրենսդրության համաձայն, կազմակերպաիրավական կարգավիճակը սահմանող համապատասխան պետական մարմնի կողմից տրված գրանցման վկայական (սերտիֆիկատի կամ այլ փաստաթղթի), հիմնադիր փաստաթուղթ (կանոնադրություն, հիմնադրման և/կամ գործունեության մասին պայմանագիր, կամ այլ փաստաթուղթ)	
3.	Իրավաբանական անձի ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ, նրա նշանակման (ընտրության) հիմքերը (օրինակ՝ իրավասու մարմնի որոշում)	
4.	Իրավաբանական անձի ղեկավար մարմնի որոշումը/լիազորագիրը՝ համապատասխան անձանց (այսուհետ՝ հաշվի կարգադրիչներ) հաշվով գործարքներ կատարելու իրավունք տալու մասին	
5.	հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց (լիազորված անձինք, հաշվի կարգադրիչներ և այլն) անձը հաստատող փաստաթուղթ	

6.	Հաշվի կարգադրիչների ստորագրության և իրավաբանական անձի կնիքի (առկայության դեպքում) նմուշների Բանկի կողմից հաստատված քարտ	
7.	Իրավաբանական անձի գրանցման երկրի համապատասխան մարմնի կողմից տրված իրավաբանական անձի հարկային մարմիններում հաշվառման վերաբերյալ փաստաթուղթ	
8.	Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի 10 և ավելի տոկոս մասնակցություն ունեցող մասնակիցների (բանժնետերերի, փայատերերի) փաստաթղթերը. Ֆիզիկական անձ մասնակցի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ իրավաբանական անձ մասնակցի դեպքում՝ անձի կազմակերպաիրավական վիճակը սահմանող գրանցման վկայական (սերտիֆիկատի կամ այլ փաստաթղթի), հիմնադիր փաստաթուղթ (կանոնադրություն, հիմնադրման և/կամ գործունեության մասին պայմանագիր կամ այլ փաստաթուղթ)	
9.	ԱՄՆ հարկատուների վերաբերյալ W-9 տեղեկանքի ձև կամ ԱՄՆ ոչ հարկատուների իրավաբանական անձանց վերաբերյալ W-8BENE տեղեկանքի ձև***	
10.	Բանկի հայեցողությամբ՝ այլ փաստաթղթեր:	

*** *1. Հաճախորդի կողմից ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները: Բնօրինակները, և պատճենները, բացառությամբ հաջորդ կետում նշված դեպքերի, պետք է լինեն պատշաճ հաստատված: Հաստատումը համարվում է պատշաճ, եթե առկա են.*
1) ապոստիլով վավերացումը, իսկ ԱՊՀ երկրների և Վրաստանի դեպքում՝ պատճենների նոտարական վավերացումը, կամ
2) այլ պետության տարածքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից վավերացումը:
2. Հետևյալ փաստաթղթերը կարող են ներկայացվել առանց պատշաճ հաստատման(վավերացման)
1) Բանկի սահմանած ձևի փաստաթղթեր,
2) ԱՊՀ երկրներից և Վրաստանից ներկայացվող բնօրինակ փաստաթղթեր,
3) ԱՊՀ երկրներից և Վրաստանից ներկայացվող անձը հաստատող փաստաթղթերի պատճեն,
4) ՀՀ և ԼՂՀ պետական մարմինների կողմից տրված փաստաթղթեր
5) ֆիզիկական անձի կողմից անձամբ բանկ ներկայացվող բնօրինակ անձը հաստատող փաստաթուղթ:
3. Այն փաստաթղթերի բնօրինակները կամ վավերացված պատճենները, որոնք հաճախորդը չի ցանկանում թողնել Բանկում, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք սույն ցանկի համաձայն կարող են ներկայացվել առանց պատշաճ հաստատման, պատճենահանվում են Բանկի աշխատակցի կողմից և ստորագրությամբ հաստատվում Բանկի աշխատակցի և Հաճախորդի կողմից: Բանկում փաստաթղթերի պատճենները վավերացվում են հաճախորդի գործադիր մարմնի ղեկավարի կամ այլ իրավասու անձի ստորագրությամբ և հաճախորդի կնիքով (առկայության դեպքում): Ընդ որում հաճախորդը և բանկի աշխատակիցը հաստատում են փաստաթղթերի բոլոր էջերը, կամ յուրաքանչյուր միավոր փաստաթուղթը մեկ հաստատմամբ այնպես, որ բացառվի հետագա փոփոխությունը, իսկ խախտմամբ կատարված փոփոխությունը ակնհայտ լինի:
4. Բանկը, որպես կանոն, չի պահանջում անգլերեն կամ ռուսերեն լեզուներով ներկայացված փաստաթղթերի թարգմանություն: Այլ լեզուներով փաստաղթղթերի ներկայացման դեպքում Բանկը պահանջում է դրանց նոտարական վավերացմամբ հաստատված հայերեն թարգմանությունները: Այնուամենայնիվ, առանձին դեպքերում, Բանկն իր հայեցողությամբ, կարող է պահանջել փաստաթղթերի նոտարական կարգով վավերացված թարգմանության պարտադիր առկայություն, անկախ նրանից, թե ինչ լեզվով են դրանք ներկայացված:

*** Փաստաթուղթը պահանջվում է միայն ԱՄՆ նախանշան ունեցող հաճախորդի դեպքում:

Սույն ցանկով սահմանված փաստաթղթերը հաճախորդներից պահանջվում են ըստ անհրաժեշտության: